



ԱՎԱԴԵՄԻԱԿԱՆ/ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՐՑԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ Է.Վ. ԱՍՐԻՅԱՆԻՆ

24 նոյեմբերի 2025թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի պատմության և ընդհանուր
լեզվաբանության ամբիոնի 19.11.2025թ. թիվ 3 նիստի

Օրակարգ

Մհեր Սուրենի Քումունցի՝ «Արցախ-Սյունիքի բարբառային բառապաշարը»
դոկտորական ատենախոսության քննարկում:

Նիստին մասնակցում էին՝ ամբիոնի վարիչ Բ.Գ.Դ., պրոֆ. Ա.Աբաջյանը, Բ.Գ.Թ., դոց.
Վ.Պետրոսյանը, Բ.Գ.Թ., դոց. Ս.Գրիգորյանը, Բ.Գ.Թ., դոց. Ն.Պարոնյանը, Բ.Գ.Թ., դոց.
Ս.Ավետյանը, Բ.Գ.Թ., ասիստ. Ա.Կարապետյանը, Բ.Գ.Թ., դոց. Վ.Մուրադյանը, Բ.Գ.Թ.,
դոց.Ն. Մարկոսյանը, ասիստ. Ռ. Շաբոյանը:

Հսեցին. իբրև առաջատար կազմակերպություն՝ հայոց լեզվի պատմության և
ընդհանուր լեզվաբանության ամբիոնի քննարկմանը ներկայացված հիշյալ
ատենախոսության վերաբերյալ Բ.Գ.Թ., դոցենտ Ս.Գրիգորյանի, Բ.Գ.Թ., դոցենտ
Ն.Պարոնյանի, Բ.Գ.Թ., դոցենտ Ս.Ավետյանի և Բ.Գ.Թ. Ա.Կարապետյանի գրավոր
կարծիքները:

Նշվեց, որ աշխատանքի արդիականությունը լիարժեք հիմնավորված է
ատենախոսության մեջ. հեղինակն իրավացիորեն նշում է, որ հայ բարբառագիտության
մեջ մինչ օրս կատարված ուսումնասիրությունները հիմնականում կենտրոնացել են

հնչյունական և քերականական (մասնավորապես՝ ձևաբանական) հարցերի վրա՝ երկրորդ պլան մղելով բառապաշարի համակողմանի վերլուծությունը: Այս առումով սույն ատենախոսությունը ուշագրավ ներդրում է հայերենագիտության մեջ իբրև մեկ ամբողջական բարբառային տարածքի բառապաշարի հանգամանակից քննություն: Աշխատանքը արդիական է նաև 2020թ. և նրանից հետո ծավալված քաղաքական իրադարձությունների համատեքստում, երբ Արցախի տարածքում ապրող բարբառակիր մարդիկ փաստացի զրկվեցին հենց իրենց տարածքում իրենց տարածքին հատուկ բարբառով միմյանց հետ հաղորդակցվելու բնական պայմանից:

Աշխատանքի դրական կողմերը

1. Աշխատանքի արժանիքներից է բազմաշերտ մոտեցումը: Հեղինակը ոչ միայն փորձում է զանազանել բառապաշարի բնիկ և փոխառյալ շերտերը, այլև քննությունն իրականացնում է տարբեր տեսանկյուններից՝ պատմական, պատմահամեմատական և համաժամանակյա:

2. Ատենախոսը քաջատեղյակ է թեմային առնչվող հայ և օտարալեզու հիմնական գիտական գրականությանը, որը գիտական բարեխղճությամբ ու քննադատաբար կիրառել է իր ուսումնասիրության մեջ:

3. Աշխատանքում զգալի տեղ են զբաղում հեղինակի բառաքննական-ստուգաբանական դիտարկումները, ինչը, հայտնի է, բավական դժվարին և խնդրահարույց հետազոտական բնագավառ է: Անշուշտ, Մ. Քումունցի առաջարկած ստուգաբանությունները զերծ չեն թերացումներից, հաճախ վիճահարույց են: Նկատենք, սակայն, որ եթե նույնիսկ այդ բառաքննական-ստուգաբանական դիտարկումների գեր 10%-ը դիմանա ժամանակի քննությանը, դա արդեն իսկ կարևոր նպաստ կլինի հայերենագիտությանը: Դեռ ավելին. եթե նույնիսկ ատենախոսի վարկածները կարող են ժամանակի ընթացքում չհաստատվել կամ մերժվել, միևնույնն է, այդ հետազոտական պրպտումները խթան կհանդիսանան հետագա ուսումնասիրողների համար՝ նրանց մղելով նորանոր նմանօրինակ պրպտումների:

4. Իրականում մի առանձին գիտական աշխատանքի նյութ կարող է լինել հեղինակի առաջարկած ստուգաբանական, բառաքնական վերլուծությունների ստուգումը, ճշգրտումը, հաստատումը կամ մերժումը. այնքան ծավալուն ու բազմազան են դրանք:

Դիտարկումներ և դիտողություններ

Աշխատանքի ընդհանուր դրական գնահատականի հետ մեկտեղ կցանկանայինք անդրադառնալ մի քանի խնդրահարույց կետերի, որոնց շտկումը կբարձրացնի ուսումնասիրության գիտական արժեքը:

1. **Ստուգաբանական վերլուծության մեթոդաբանություն:** Թեև ատենախոսը, ընդհանուր առմամբ, ծանոթ է համեմատական լեզվաբանության և լեզուների համեմատական ուսումնասիրության մեթոդաբանական սկզբունքներին, սակայն դրանց կիրառությունը ոչ միշտ է հետևողականորեն արված աշխատանքում: Հաճախ առաջարկելով որևէ հնչյունական անցում (օրինակ՝ *կ-ք* առնչությունը *լոկ-լոք* բառի դեպքում)՝ հեղինակը դա չի փաստարկում համապատասխան օրինակներով, ըստ այդմ՝ տվյալ դեպքում ենթադրվող հնչյունական անցումների օրինաչափականության հարցը մնում է չհիմնավորված և խնդրահարույց: Այնինչ նման փաստարկների առկայությունը անհրաժեշտ է ստուգաբանությունների համոզականությունն ապահովելու համար: Նույնը վերաբերում է իմաստային անցումների հիմնավորմանը, որը, ինչպես հայտնի է, ստուգաբանության մեջ երկրորդ կարևոր գործոնն է:

2. **Աշխատանքի համակարգվածություն:** Աշխատանքը կշահեր, եթե թեմատիկ խմբերը ներկայացնելիս հեղինակը գերծ մնար բառաքնական և ստուգաբանական դիտարկումներից, որոնք առանձին ենթավերնագրով իսկ ներկայացնում է յուրաքանչյուր թեմատիկ խմբի ներսում: Աշխատանքում այս կամ այն թեմատիկ խմբում բառերի քննությունը ներկայացված է անմիջօրինակ, չհամակարգված դասավորությամբ: Օրինակ՝ 1.10 թեմատիկ խմբում քննվող բառերը սկսվում են

տնտղել բառով և ավարտվում *լուծ, սամէ* բառերով: Հասկանալի է, որ աղյուսակներում դրանք պիտի տրված լինեն՝ ըստ թեմատիկ խմբի ներսի ենթաթեմաների բաժանման, բայց ամբողջական քննական ցանկերում ու առանձին դիտարկումներում դրանք կարող էին բերվել այբբենական կարգով՝ հեշտացնելով որևէ բառի որոնման գործողությունը:

3. **Հետևողական մոտեցում:** Աշխատանքի 63-րդ էջում հեղինակը իր կազմած աղյուսակների ընթերցման ծավալուն ուղեցույց է ներկայացնում ծանոթագրության տեսքով: Այնտեղ նշում է, որ Բաքի բառարանում առկա, բայց հայերենում բացակայող միավորները աղյուսակում թարգմանվել, բայց չեն համարակալվել: Բայց հենց առաջին աղյուսակում համարակալված են նաև հայերենում չվկայված հ.ե. արմատները: Օրինակ՝ *աշխարհ* բառի համար: Աղյուսակի վերջում էլ երևում է այս թեմատիկ խմբի բառերի ընդհանուր թիվը՝ 158՝ և՛ վկայված, և՛ չվկայված բառերի հաշվարկով: Իսկ աղյուսակ 10-ում արդեն վերջին տիպի միավորները համարակալված չեն: Ընդհանրապես, հասկանալի չէ, թե ինչպես է փոփոխվում Բաքի բառարանում, Գ.Ջահուկյանի ստուգաբանություններում և Արցախ-Սյունիք տարածքների բարբառներում եղած բառային միավորների թիվը: Հենց աղյուսակ 1.1.-ում՝ էջ 67, ըստ Բաքի բառարանի՝ *Ֆիզիկական աշխարհ* թեմատիկ խմբի միավորների թիվը ներկայացվում է 45, ըստ Գ.Ջահուկյանի՝ 150, բարբառներում՝ 106: Ինչպես են այս թվերը հաշվվում և փոփոխվում աղյուսակից աղյուսակ՝ պարզ չէ: Նաև աշխատանքի ներածության մեջ հեղինակը նշել է, որ քննվում են ինչպես բառային միավորներ, այնպես էլ դարձվածքներ, սակայն աշխատանքում դրանք տրված են բառաքննական շարքերին միախառնված, հաճախ այդ միավորները հարադրավոր բայեր են, որոնք դարձվածքային արժեք չունեն, իսկ իսկապես բարբառային դարձվածքները շատ քիչ են և անտեսանելի աշխատանքի ծավալի մեջ:

4. **Գիտական հղումներ:** Ատենախոսության մեջ առկա է հղումների կոնկրետության խնդիր: Հատկապես ստուգաբանական վերլուծություններում և նախաձևերի

վերականգնումներում անհրաժեշտ է նշել ոչ թե ընդհանուր աղբյուրներ (Աճառյան, Ջահուկյան, Պոկոռնի), այլ կատարել ճշգրիտ հղումներ՝ նշելով գրքի համապատասխան հատորն ու էջը (օրինակ՝ ՀԱԲ, հ. 2, էջ 125, կամ՝ ՀԼՊ, էջ 88): Գիտական աշխատանքում սա պարտադիր պահանջ է, որը հեշտացնում է տվյալների ստուգումը և վկայում հեղինակի մանրակրկիտ աշխատանքի մասին: Առաջարկվում է տեքստում կիրառել ներտեքստային հղումների ընդունված ձևաչափ, իսկ գրականության ցանկի սկզբում ներկայացնել օգտագործված հապավումների բացատրությունը: Տողատակի հղումները անհրաժեշտ է միօրինակացնել՝ ուշադրություն դարձնելով նաև տառաչափին: Երբեմն հղումները տրված են հեղինակի անուն-ազգանուն կամ ազգանուն, թվական հաջորդականությամբ:

5. Այլ դիտարկումներ: ա. Սյունիք-Արցախի տարածքների բարբառներում պահպանված հ.ե. բառերի հիման վրա կարելի էր նաև հետաքրքիր եզրահանգումներ անել՝ մարդկանց կենցաղի, սովորությունների, սովորույթների, հասարակական-քաղաքական, մշակութային տարաբնույթ հարաբերությունների մասին: Դրանց մասին խիստ ընդհանրական դիտարկումներ կան «Եզրակացություն» բաժնի 1.6. կետում:

բ. Էջ 113-ում ատենախոսը գրում է. « Ը հնչյունը բարբառախմբի մի շարք բառերում ձայնեղների շնչեղացման հետևանքով նախորդող դիրքում դուրս է ընկնում, ինչպես և՛ արջառ > աչառ, բորբ > պեփ, երբ > հեփ և այլն»: Պետք է լինի՝ ձայնեղների շնչեղ խլացման հետևանքով:

գ. Կան ոճական անհարթություններ. «Ջահուկյանը, որին հետևել են բազմաթիվ աշխատություններ» (281), կիսատ նախադասություններ (282), վրիպումներ, բացթողումներ, կրկնություններ՝ փախանցում, անցակցված, բոինի, պատկանելիություն, «...իր մեջ ներառում է» և այլն (էջք 41, 48, 50, 128, 154, 282, 283, 312 և այլն):

Ամփոփմանը նշվեց, որ Մհեր Քումունցի ատենախոսությունը, չնայած նշված թերություններին, որոնք բնական են նման ծավալի և բարդության աշխատանքի

համար, հայ բարբառագիտության մեջ կարևոր ձեռքբերում է: Այն ոչ միայն լրացնում է առկա բացը, այլև իր առաջ քաշած վարկածներով ու վերլուծություններով դառնում է արժեքավոր ելակետ հետագա հետազոտությունների համար:

Այսպիսով՝ ընդհանուր եզրակացությունն այն է, որ Մհեր Սուրենի Քումունցի «Արցախ-Սյունիքի բարբառային բառապաշարը» դոկտորական ատենախոսությունը գրված է պատշաճ մակարդակով և բավարարում է ներկայացվող պահանջները:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքին:

Որոշեցին. Մհեր Սուրենի Քումունցի «Արցախ-Սյունիքի բարբառային բառապաշարը» դոկտորական ատենախոսությունը կարևոր աշխատանք է: Այն բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի պահանջները, համապատասխանում է գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և Ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտության թվանիշին:

Քվեարկություն՝ կողմ (9), դեմ (0), ձեռնպահ (0):

Նիստի նախագահ՝ ամբիոնի վարիչ  Բ.գ.դ., պրոֆ. Ա. Ն. Արաջյան

Նիստի քարտուղար՝  Կ.Գալստյան

19.11.2025թ.

Հաստատում եմ Բ.գ.դ., պրոֆ. Ա. Ն. Արաջյանի ստորագրությունը:

ԵՊՀ գիտական քարտուղար  Մ. Նովհաննիսյան

